ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1919-Ա « 19 » մայիսի 2025թ.

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Կ.Է.Ջ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ջանիբեկ Թեմուրի Մկրտչյանի կողմից լիազորված անձ Արմեն Վանիկի Պետրոսյանի դիմումը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշմամբ՝

1.«Կ.Է.Ջ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ 2025 թվականի (ընթացիկ տարվա) համար տրամադրել Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայի հ.22/7 հասցեում գտնվող հասարակական նշանակության տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի (հեստապարային ակումբի) գործունեության թույլտվություն:

2.Ընդունել ի գիտություն, որ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար ընթացիկ տարվա 1.500.000 ՀՀ դրամ տեղական տուրքը վճարված է:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Ս.Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ